



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 40

ՀԱՐԱՐ

31 ՄԱՅԻՍ 1908

ԱՊՂՅԵՍՏՈՒՈՐ ԵՍՈՒՈՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՊՂՅԵՍՏՈՒՈՐ ԵՍՈՒՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.

Պալեն-Գաբու, Օռոգտի-Պաք հաստատութեան դէմ, թիւ 16

Հատոր 40 փառա

(T. آساوریان) شرکت مرتبه مطبعه — باب طایجاد سندھ نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառարի թիւ 52



[2 Ե ու Բ , ոս Բի ու ոս Բի եւ ձեռ Բի]
Վիտնգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ :
բայց էական կէտն է լու մեքենայ մը ունենալ , որովհետեւ լու
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
և աղաւակի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լուսազոյն է . ոսյն մեքենան ամենէն կտարի լազորութեանը ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՊՐԵՍԻԵԼԻՔ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒԹՅՈՒՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , Թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց , Կալաթա Մէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան , Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , Թիւ 13 . |
| ՍԿԻՍՏԱՐ | 2 Թրը Պօյու , Թիւ 120 . |

Կասաբեալ երախաւորութիւն

Մասնահիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր . վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , Թիւ 343 և 343 կրկին , Տիւզօղլուի տունը :



ՐԵՒԵԼՔ ՕՐԱ-

Թերթ ազգային , գրական եւ ֆաղափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ . Պոլսոյ համար 80 դր . վեցամսեայ 45 դր . գաւառներու համար տարեկան 108 դր . վեցամսեայ 60 դր . և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր . վեցամսեայ 20 ֆր . Ձեռքէ վաճառում՝ 8 անգամ փարա : **ՐԵՒԵԼՔ** հրա լարակ կ'ելլէ ամէն օր , կէս օրին , խընաւալ բովանդակութեամբ , ընտիր յօդուածներով , թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :

ՐԵՒԵԼՔ , իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով , առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ :

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը , որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար : Ծանօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները , եկեղեցական , կրօնական , տնտեսական-սեղանաւորական , երկրագործական , իրաւաբանական եւայլն , բաց ի գրական , բանասիրական գրուածքներէ , օրուան տեսութիւններէ եւայլն :

ՐԵՒԵԼՔ ի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագիրն լպէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին Էֆ . Պօյաճեանի հասցէին , Ղալաթիա , Մահմուտիէ Ճաատէսի , ուր հաշտատուած են թերթին ապարանն ու խմբագրատունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 40

ՇԱՐԱԹԱԹ-

31 ՄԱՅԻՍ 1908



ԳՐԻԳՈՐ ԷՅ. ԶՈՒԼԶԱՆԱՆ
ՀԵՂԻՆԱԿ ՆԻԶԱՎԷՆՏ ԵՌԱԶԱՅՆԻՆ

ԱՆԳԼԻՍԵՐԷՆԷ

Գ Ե Ր Մ Ա Ր Դ Ը

ԵՍՍՍՄՈՒՆԵՐՈՒ ՀԱՍՑԷԻՆ

Գերմարդը մասնաւոր դասակարգի կամ պաշտօնի մը չպատկանիր. ինք աշխարհա- քաղաքացի է, եւ աւելի՝ վերացեալ դադա- փար մը քան թէ ուղիղ անձնականութիւն մը: Շատ կը տարբերի երեւոյթով, բայց մէկ ակնարկով կրնայ ճանչցուիլ: Կրնայ ակնոց գործածել, կամ երկայն մազ, ու անօրինակ կերպով փայլուն կօշիկներ, եւ սակայն գեր- մարդը չըլլալ. եւ կամ կրայ ըլլալ որ ալ- նոց չգործածէ, մազերը կնտած ըլլայ եւ կօ- շիկներ ալ չըլլան, եւ սակայն անխուսա- փելի կերպով կրէ կեղծ ստացումի եւ կեղծ գերմարդութեան պիտակը:

Գերմարդը արդարեւ շատ սովորական անձ մըն է. պարզապէս կիսաստուած է իր յատուկ ստեղծումին եւ արարիչը իր երեւա- կայութեան. նոյն իսկ կը կազմէ իրեն յատուկ աշխարհ մը եւ ինքզինքն անոր պետ կը կարգէ:

Գերմարդը ամուսնանալիք մէկը չէ. բայց ափսոս տնտեսական կերպով կը գտնէ կին մը որ յաճախ կը յանձնուի այն տեսակ փայլի մը որ ոսկիինը չէ, եւ որուն վրայ մեր գեր- մարդը կը յօռորտայ իբր կիսաստուած մը:

Յաճախ այս գերմարդը շատ քոյրեր ու- նեցող մէկը չէ. որովհետեւ անոնք չեն քա- ջալերեր գերմարդութիւնը. եւ ոչ ալ ընդ- հանրապէս առ առաւելն երկուքէ աւելի անդ- րանիկ եղբայրներ կունենայ, քանի որ անոնք տրամադիր են շուտով իրեն գերմարդու- թեան ձեւերը բողբոջումին մէջ իսկ խամբե- ցնել, թէեւ ինք նոյնիսկ Օքսֆօրտէն եկած ըլլայ:

Գերմարդը շատ անտանելի արարած մըն է տանը մէջ. օրինակի համար եթէ բօխիկ մըն է, օրն ի բուն պիտի իմանաս որ ինք ամէնէն իրաւացին, ամէնէն իմաստունը եւ ամէնէն հանրածանօթն է շուրջի գտնուած բոլոր բօխիկներէն. քեզի շնորհ մը ընելու

ձեւով կը պատմէ թէ միւսները ինչպէս աչ- քառու սխալներ կը գործէին եւ ինչպէս ինք ճիշդ ժամանակին հասած է ուղղելու համար իրենց խոշոր սխալները: Նոյնպէս ժամերով քեզի կը պատմէ իր տեսութիւնները միք- րոպներու վրայ եւ իր ամէն բանի վրայ հմտութիւն ունենալը կը կլեցունէ ձեզ կո- կորդնուդ վար: Եւ շատ անգամ ալ կըռ- նակը օրմիւնէին տուած իր փորձառութիւն- ները կը պատմէ եւ կը թուէ հիւանդութեան անօրինակ դէպքեր գորս բուժեց. կը խօսի իրեն յատուկ ախտաճանաչութեան կեր- պին վրայ, եւ այնքան կը լսէ մարդ իր ճար- տարութիւնը, իր հեռատեսութիւնը, ու սը- րամտութիւնը՝ որ մարդ կսկսի զարմանալ թէ իր շուրջը գտնուողները ինչպէս կրնայ ըլլալ որ հիւանդանան օր մը:

Գերմարդու ուրիշ տիպար մըն է նաեւ այն, որ ինչպէս կը կոչուի, արուեստագի- տական խառնուածք ունի: Այդ արուեստա- գիտական խառնուածքը շատ շուտ կը ճանչ- ցուի:

Շատեր կը ճանչնան այս կերպասովը չինուածներ՝ որոնք կը տառապին այս կեր- պով: Մասնաւոր կը ճանչնան գրագէտ մը. թէեւ պատուոյս վրայ խօսք կուտամ որ չեմ գիտեր թէ ո՛ր թերթին կը գրէ: Ըստ երե-ւոյթին արուեստի թէ քննադատ մըն է, թէ միւլգիթի քննադատ եւ թէ ամէն բանի. թէ եւ ոչ իր քննադատութիւնները տեսած եմ եւ ոչ ալ հանդիպած եմ մէկու մը որ ո եւ է արժէք մը ընծայէ իր տեսութիւններուն: Նոր խաղի մը մասին եթէ գովեստ մը ըլ-լայ, անմիջապէս հակառակը կը խօսի. գե-րագոյն արհամարանք մը ունի այն գրքին դէմ, զոր ամէն մարդ կը հարգայ. «Փողո-վուրդ» ի մասին կը խօսի այնպէս մը իբր թէ ինք անոր մէկ անգամը եղած չըլլար ընաւ, եւ ձանձրոյթի հառաչներ կ'արձակէ

երբոր դուք գովէք բան մը կամ մէկը — բացի իրմէ:

Այս շատ անտանելի անձը օր օրի աւելի անտանելի կը դառնայ, եւ դժբաղդաբար իր կինն ալ, կամ զինքը սիրելուն եւ կամ փրմէ վախճալուն համար է որ, օր մըն ալ չի գառնար չըսեր թէ ինք ալ սովորական մահկանացու մըն է:

Ինքնայատուկ տեսութիւնները ունի արուեստի, միւլդիքի, բարոյականի եւ վարք ու բարքի մասին, եւ ակնոցը վար կը ձգէ ու յոնքերը ձանձրոյթով մը վեր կը բարձրացնէ եթէ երբէք դուք համարձակիք, նոյն իսկ սանկ թեթեւ մը հակասէք իր տեսութիւններուն:

Հէգ գերմարդ. չի կրնար լիովին վայելել կեանքը. որովհետեւ ինչպէս բարեկամ մը ըսաւ, շատ դժուար բան է բնաւ երջանիկ չըլլալը: Երբէք չի հրճուիր, որովհետեւ խիստ զբաղած է մտածելով թէ ինչպէս աւելի լաւ կրնայ գրել, երգել կամ խօսիլ որպէսզի իր շուրջը աղմուկ յարուցանէ:

Յաճախ կը մտածեմ թէ շատ նեղացուցիչ բան ըլլալու է միշտ «գերմարդ» ըլլալը, եւ շատ ալ տաղտկալի՝ միշտ պակասութիւն գտնելը: Եւ քանի որ ան, Գերմարդը, կը նայի մեր վրայ իբրեւ խաղա ժողովուրդի մը, ուրեմն մենք ալ թողունք զինքը իր քնազաւառին մառախուղներուն հետ:

Գերմարդու երրորդ տիպարն է բարձր ձայնով սնապարծը, որ միշտ իրաւունք ունի, եւ բարեբաղդաբար քիչ մը հազուադէպ նմոյշ մըն է, որովհետեւ ոչ միայն իր ընտանիքին սոսկումն ու յուսահատութիւնն է, այլ նաեւ բոլոր անոնց՝ որոնց հետ անմիջական յարաբերութեան մէջ է:

Իր ամբողջ կեանքը կանցունէ ատոր անոր ըսելով թէ ուրիշներուն ըրածը ինք ինչպէս աւելի լաւ կրնար ընել: Դուք այս տեսակ մարդոց չէք կրնար խօսիլ ձեր նոր առած մէկ բանին, կամ գնած տանը մասին. որովհետեւ անմիջապէս պակասութիւն պիտի գտնայ ոչ միայն տանը զիրքին, կլիմային, եւ դրացիներուն, այլ պիտի ըսէ ձեզի թէ ինչպէս ընելու էիք, ո՛ւր առնելու էիք եւ նոյն իսկ կը յառաջանայ ըսելու չափ թէ, մարդ Աստուծոյ, նախապէս ինչո՞ւ համար

չի գայիք անգամ մը իրեն հետ խորհրդածելու, ատանկ գործի մը ձեռնարկելէ առաջ:

Իր խեղճ կնկանը դասեր տալու կենէ տանտիրինութեան մասին եւ միշտ պօռալով ու հրամայական: Կը ճանչնամ ասանկ մարդ մը. սաստիկ հիւանդացաւ. մեր գերմարդը մեծապէս նպաստեց ապաքինումի մը տաժանելի ձանձրութիւնները ա՛լ աւելի անտանելի դարձնելով, որովհետեւ խեղճ կնոջ գլխուն միշտ կը կարդար թէ ինչպէս պէտք էր ընել շուտ աղէկնալու համար եւ. ու միշտ ալ իր զիտողութիւնները կը վերջացունէր սապէս ըսելով. «Եթէ ես քու տեղդ ըլլայի. այսինչ այնինչ բաները ընելով, մինչեւ հիմա շատոնց աղէկցած էի. բայց դուք կիներդ եւ. եւ»): Գերմարդու լայս դասակարգը «Դուք կիներդ» ըսելով կը խօսի գերագոյն արհամարհանքով մը եւ գերիվերոյութեամբ մը:

Ճակատագրի խաղով մը, շատ չանցած ինք հիւանդացաւ, եւ իր ապաքինումի շրջանին՝ կարելի չէ ըսել թէ ուէ մէկը կրնար իրմէ աւելի տաժանելի ու անհանդուրժելի ըլլալ: Կը մերժէր հնազանդելու իր բժիշկին միշտ պակասութիւն կը գտնար հիւանդապահին ըրածին, եւ բացարձակապէս խենդ դարձուց իր կինը, որ շատ մեծ համբերութեամբ մը եւ ինքնազսպում մը ունեցաւ յիշեցնելու ամուսինին, այն բոլոր խրատները զորս տուած էր իրեն իր իսկ ապաքինումի ատեն: Ու շատ աղէկ ալ ըրաւ, որովհետեւ ի՛նչ օգուտ վայն յանդիմանելով: Արդարեւ ի՛նչ օգուտ, որովհետեւ ո՛չ մէկ, ո՛չ մէկ բան կրնայ փոխել գերմարդը, ոչ մէկ բան կրնայ իրեն զգացնել թէ ինք ալ ուրիշներու պէտ չինուած է սովորական հոգէ մը, ոտվորական հմտութիւն մը ունի, բայց անձին մասին շատ մը թիւրիմաստ մեկնութիւններով ուռած: Պէտք է թողուլ զինքը առանձին եւ միակ խրատը զոր եթէ համարձակութիւնը ունենայինք պիտի տայինք իրեն, բանաստեղծին սա խօսքը յիշեցնելին էր թէ.

Ինչ մեծ շնորհ է այն զօրութիւնը որ մեզ տուած է, տեսնելու ինքզինքնիս այն աչքով որով ուրիշները մեզ կը դիտեն:

ՏԻԿԵՆ Ա. ԹԷՈԴՈՒՆ



ՄՏԱԾՈՒՄՆԵՐՍ

Այս ինչը՝ երջանկութիւնը գաւաթ մը օղիի մէջ կը գտնէ և ուրիշ մը՝ երկու աղւոր շրթներու միջեւ, ժիրօնին երջանկութիւնը՝ Սաքսի իշխանուհւոյն փէշերուն տակ, դպրոցական տղոց երջանկութիւնը վախճան է և բոքէր խաղացողներուն՝ սեխանը, միշտ՝ երջանկութիւնը կուտայ քօքօթին և հացի պատառով մը երջանիկ է անօթին, այսպէս ալ ամէն ոք իր ուղած կերպով երջանիկ ըլլալ կը կարծէ:

* * *

Թահրթիի կիները ճարպ կը քսեն իրենց մորթին իրենց էրկներուն հաճելի երեւնալու համար, Նիսամ-Նիսամները օղակներ կանցնեն քթերնուն մի և նոյն նպատակաւ, բաբիզուհին չարածճի կերպով կը հանգրիճուի, Ափրիկուհին վարդի իւղով կօծէ ստինքները, միայն հայու կիներ է որ էրկանը հաճելի և բեւեալու համար ժազերը անգամ չի սանտրեր:

* * *

Կինը սիրելու, սիրուելու, հրապուրելու համար ստեղծուած արարած մըն է, բոլոր միւս առաքինութիւնները ետքէն կուգան:

* * *

Եթէ ես աղջիկ ըլլայի, օրերով Սուրբ Սարգիսին ոտքերուն առջեւ պիտի չոքէի և պիտի փառաբանէի իր անիմանալի զօրութիւնը հետեւեալ աղօթքը մրմնջելով ի խորոց սրտի:

— Միւլքանէր գիս ով Սուրբ Սարգիս: Դու որ այնքան կը սիրէիր աղջիկները, դէմս հանէ մէկը որ քիչ մը քու խույէդ ունենայ: Անապատի մէջ բուսած ծաղկի մը պէս, կը ծիւրիմ կը հալիմ կոր, չե՞ս տեսներ: Հաս-

ցուր ինծի երկրի պսակին և անոր փոխարէն արծաթէ սիրտ մը քեզի նուէր: Բաղդաս քու ձեռքերուդ կը յանձնեմ: Գթա և ողորմէ տառապելոյս, լոյսդ, զօրութիւնդ ցուցուր ինծի որ օրհնեմ և փառաբանեմ զքեզ: Գթա՛ ողորմած, փրկեա՛ և ազատեա գիս: Երեսներս հողին քսելով կաղերսեմ քեզի, լուր տէր աղօթից իմոց և տուր ինձ զխնդրուածս իմ: Երնորհք տուր դէմս ելլողին և պարկեշտութիւն: Եթէ երբէք օր մը, չարաչար գործածել ուզէ անմեղութիւնս և ձեռքէս խլել ուզէ պատիւս՝ այդ վտանգաւոր և երկիւղալի վայրկեանին՝

Սուրբ Սարգիս՝

Փրկէ զիս:

* * *

Ի՞նչ տարբերութիւն կայ տիրացուի մը և ձուկի մի միջեւ:

— Ձուկ մը գլխէն կը հոտի, իսկ տիրացու մը ոտքէն:

* * *

Ժամանակները որքան փոխուած են: Անոր հիմը դրաւ մեր եկեղեցիին, կը գոհանար պարզ ապալէ վերաբերուով մը, իսկ անոնք որ Անոր փոխանորդներն են այսօր հարեւր կերպասէն վար չեն հագուիր:

* * *

Եթէ զոյգ մը աղւոր, ախորժաբեր բուժբեր նկարագրելը անբարոյականութիւն է՝ այդ տողերը վերհանելու կամ ձրի կարդալը՝ չատ աւելի մեծ անբարոյականութիւն մըն է:

Թ. ԱԼՓԻԱՆ



ԼՈՒԾՈՂԱԿԱՆԸ

(ՍԻՐԱՄԱՍԱԼԻ ՊԵՍ ԲԱՆ ՄԸ)

Ճի՛շդ ութը օր կ'ընէր որ ...

Այո՛, ութը օրէ ի վեր ...

Ինչպէս բացատրել հիմա խիստ բնական
բան մը, զոր պիտի վարանէի բնաւ ձեր ա-
կանջէն վար սահեցնելու, բայց, հոս, ձեր-
մակ թուղթին վրայ արձանագրելու համար,
ճակատս ու գրիչս՝ ամօթահար՝ կը շիկնին:

Խօսքը կ'երթայ, այլ գիրը կը մնայ...

Որովհետեւ, բաներ կան, զորս չենք վա-
րանիր ընել, սակայն երբ կարգը գրելու դայ,
չպիտի համարձակէինք երբէք, — ո՛հ, եր-
բէ՛ք — պայմանաւ որ մէյմէկ խոշոր ...
տանկալախներ չըլլանք:

Չոր օրինակ, շատ սովորական բան է մեր
պալսրգին դարպասելը կամ մեր տիկին զո-
քանչին մատուցանելը այն մասնաւոր յար-
գանքները, զորս Ս. Խորանին առջեւ երդ-
ւընցած ենք միայն անոր աղջկանը ոտքը
գնել:

Բայց, երբ հարկ ըլլայ այս բաները գրել
թերթի մը կամ հատորի մը մէջ, ո՛չ մենք,
ո՛չ մեր պաշտօնը, ո՛չ ալ մեր զոքանչը պի-
տի ներէինք ատոր:

Ահա այն կարգէն է իմ ըսելիքս:

Տեսէք ի՞նչ յառաջարկներու կը դիմեմ
հասնելէ առաջ նիւթիս հարկաւ բաւականա-
չափ սրամտութիւնը կ'ունենաք բնականա-
բար գուշակելու որ՝ ձեր բարեացակամ անու-
շադրութենէն պիտի օգտուիմ նորէն անտա-
նելի բան մը կլլեցնելու համար ձեզի:

Բան մը զոր ամէն առտու կ'ընենք ա-
մէ՛նքս, ես, դուն և նոյն իսկ աշխարհիս է՛ն
գեղանի կինը, և նոյն իսկ երբեմն օրը քա-
նի մը անգամ, և երբ պատահմամբ երկու օր
վրայէ վրայ սկիւմայ թերանանք ընելէ մեր
այդ աւագ պարտականութիւնը, անմիջապէս
բժիշկներու կը դիմենք և պաղատինք կ'ա-
ղերսենք անոնց որ իրենց բոլոր գիտութիւնը
թափեն՝ այդ բանը ընել տալու համար
մեզի:

Կարծեմ սկսաք գուշակել, և եթէ չսկը-
սաք, այն ատեն ես պիտի սկսիմ կասկածներ
ունենալ ձեր սրամտութեան մասին:

Բայց, քանի որ մէ՛յմը սկսանք (C'est le
premier pas qui coute), յանդգնութիւնս և
քուփես երկու ափս կ'առնեմ՝ փութալով
mettre les points sur les I:

Թո՛ղ շատ ամչկոտ ընթերցողներս հող-
մահարով ծածկեն իրենց սիրուն երեսին կէ-
սը, այդ կերպով՝ les convenances sont sau-
vées, կրնամ ուղածս ընել և ո՛չ ոք կրնայ
ըսելիք մը ունենալ:

Ահա՛:

Ութը օր կ'ընէր որ Թովմաս Զըգըրգեան,
մեր ազնիւ բարեկամը, թթաւարեր այցելելէ
հոն, զոր անգլիացիները գիրկընդխառնուած
W-C պերճախօս գիրերով կը բացատրեն,
Ֆրանսացիները՝ «toilette» աւելի սէնպօլիք
ու ... մաքուր ածականաձեւ գոյականով,
իսկ թուաբաններ՝ ձախ ձեռքի ցուցամատով
մը որ 10×10ի գումարը ցոյց կուտայ ...
պէտք ունեցողներո՛ւն:

... Ո՛ւֆ, գիտէք թէ խոշոր բեռ մը
վար առին կռնակէս ...:

×

Աշխարհիս բոլո՛ր լուծողականները՝ ութը
օրուան մէջ չէին կրցած ... լուծել Թովմաս
Զըգըրգեանի բարդ խնդիրը և տիեզերքին
բոլո՛ր լավրմանները ... ձայն բարբառոյ
յանապատի մնացած էին:

(Ներեցէ՛ք բացատրութեան pittoresque
ձեւին համար, զոր պարտաւորուած կը դգամ
ինքզինքս գործածել՝ յանուն գրականու-
թեան):

Պոլսոյ բոլո՛ր տօքդօրները՝ — մէջը ԸԼ-
լալով մեծանուն բարեկամս Տօքդ. Զիֆօզ-
եանը, որ թէեւ տօքդօր մըն է, բայց ...
ծՏ-աստուածաբանութիւն, — անկարող յայ-
տարարած էին ինքզինքնին, աւա՛ղ, դար-
ման մը գտնելու Թովմաս Զըգըրգեանի այս

ողորմելի վիճակին, որ կ'երկարէր ... գրական վիճարանութեան մը պէս:

Սեթի'ն, հիւն-եաղի', ինկիլիզ-բուզի'... և դեռ ինչե՛ր, ինչե՛ր, Գանգիւքի, Նարկիւլէճեանի, Լեւոն Կիւմշեանի խանութները ամբողջ:

Պոլսոյ բոլոր դեղարանները ... կուլ տալու վրայ էր թովմաս, առանց ո՛ր եւ է պըզտիկ մէկ արդիւնքի:

Սարսափելի էր, խաչո՛ւր, terrifiant, ultra-ահուելի:

Ու — chose étrange! — ո՛ր եւ է անհանգըստութիւն ալ չէր զգար և կը շարունակէր ուտել, խմել առաջուան պէս:

Կարծես բնութիւնը ըսած էր անոր օրին մէկը.

— Պիտի ուտես, բայց ...

Ու տակաւ արտասովոր, հակաբնական ու նմանը չունեցող մարդ մը դառնալու հաճոյքը պիտի ըմբռնէր թովմաս, եթէ սակայն բըժիշկները չյայտարարէին իրեն որ՝ եթէ չաբա՛թ մըն ալ շարունակէ այսպէս, չունիլ անդիտի աշխարհ կ'առնէ շիտակ:

Իր այս անել ... կացութեան վրայ խորհելու զբաղած էր կէս օրէ մը վերջ, Լըպօնին անկիւնը, մօքայի պաղպաղակ մը ուտելով, (այս պաղպաղակն ալ անդիիններուն քովը պիտի երթար ու ... մնար, աւա՛ղ) երբ խանութէն ներս մտաւ կին մը:

Շրջազգեստին ու ժիւթօնին ֆրուֆրույէն սթափած կէս մը, թովմաս նորեկուհիին նախեցաւ՝ յուսահատօրէն մտածելով.

— Եթէ այս կնիկն ալ ուտեմ, ա՛ս ալ ... մէջս պիտի մնայ:

Յանկարծ մեծ յուզում մը ելեքտրական հոսանք մը պտրտացուց հինգ զգայարաններէն՝ բուն մէջ թովմաս Ձըզըզեանի:

Ծունկերը կ'թոտեցան:

Պաղ քրտինք մը թրջեց ողնայարը:

Աչքերը շփոթեցան:

Եւ խանութը սկսաւ գլխուն շուրջը պար դառնալ ...

Ներսիդին տակնու վրայ եղաւ ամբողջ և աղիքները իրար անցան:

Իր նախկին Տիւլիսէն էր, — Էօթէնին:

Ու — ո՛վ հրաշալիք — ի՛նչ որ բոլո՛ր

բժիշկները ու բոլոր լուծողականները, աշխարհիս բոլո՛ր դեղերն ու դեղարանները՝ չէին յաջողած ընել, այս կինը ըրաւ, միայն երեւնալով:

Իտէալ ... բիւրկաթի՛ֆ մըն էր ուրեմն այս կինը:

Ու — կառսո՛ն, ո՛ւր է ... հարցուց թովմաս՝ աչքերը ակնապիճերէն դուրս պոռթկացած:

Ու վազեց հո՛ն հո՛ն հո՛ն, զոր իր բո՛ւն անունովը կոչելու դժնդակ կացութենէն փրկեցէք զիս, վերջապէս հո՛ն ուր մարդիկ միշտ սովոր են ... մինակնին երթալ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Կիներ կան՝ որոնք մերթ Թիւնիատի-Եասօսի դերը կը կատարեն մեր վրայ:

ՀԱՐՍՆԻՔ

Ուրախութեամբ կը ծանուցանենք մեր համակրելի աշխատակից, սրամիտ դերասան և երգիծաբան Երուանդ Էֆ. Թօլայեանի առանձնութիւնը ընդ Օր. Նոյեմի ֆրուճեանի:

Երուանդ Էֆ. Թօլայեան Գում-գարուի մէջ հանդիպած է Օր. Նոյեմի ֆրուճեանի և անմիջական փոխադարձ համակրութեան, վաղվաղակի առաջ երթալով՝ Ս. Պաակի առարողութիւնը կատարուեցաւ ապրիլ 1ի օրը:

Պաակադիր քահանան էր Պրուսայի Տ. Բերովբէ Հայրը, որուն յուզարկաւորութեան և օծման հանդէսը տեղի ունեցաւ անցեալ տարի:

Կնքահայրն էր Հրանտ Էֆ Նազարեան, իսկ կնքամայրը՝ Սուրբիկ տուտուն:

Ներկայ էին Հանգազիսակի և Մանգումեի բոլոր ընթերցողները:

Ընդունելութիւնը կատարուեցաւ Բէօրըն Թէֆէսիի կաղինօին սրահը, où le champagne coulait à flots:

Սեղանին վրայ ներկաներէն մէկը ոտքի ելլելով բաժակաճառ մը արտասանեց գըրաբար լեզուաւ, որպէս զի ըսած խօսքերէն ոչ ոք բան մը հասկնայ:

Սմբատ էֆ. Բէսէճեան կ'երթար կուգար.
քստ սովորութեան:

Կնքահայրը զիլ-զուռնա էր եղած, զուռնա
չալել տուաւ ի պատիւ իր ընկերոջ, մինչ
կնքամայրը չիփթե-թիլի մը խաղաց:

Հարս ու փեսան բազմաթիւ նուէրներ
տուացան, որոնց մէջէն յիշատակենք. —

Սամաթիացիները՝ տուղինա մը թօփիկ:
Նէնի-գարուցիները՝ 200 հատ ըսթրիտեա:
Խազեղցիները՝ 5 օխա խամսի:
Բերացիները՝ քանի մը տուփ դեղահատ:
Գրողները՝ իրենց արհամարհանքին հա-
ւաստիքը:

Վարժապետները՝ իրենց պարապ քսակ-
ները:

Հայու կնիկները՝ քանի մը հատ աւելի
կօթ:

Վարժուհիները՝ քանի մը տուփ երեսի
փուտուա:

Նախկին սիրուհիներէն մէկը՝ շիշ մը քե-
զապ:

Նախկին սիրուհիներէն ուրիշի մը նոյն գի-
շերուան համար հրաւիրագիր մը:

Վահան փափաղեան իբր նուէր զրկած էր
իր կապիկը:

Երուանդ Թօլայեան հանրածանօթ է իր
քատախօսութիւններով, որոնցմով կ'ողողէ
մեր խեղճ գրականութիւնը և Հանգրազիսակի
էջերը:

Իսկ Օր. Նոէմի Ֆրունքեան, ուսեալ,
բարեկիրթ և զարգացած աղջիկ մըն է, որ
պատիւ կը բերէ հայ իգական սեռին և կը
խոստանայ պատիւ բերել նաեւ ... իր ա-
մուսինին:

Մեր շնորհաւորութիւնները նորապսակ ա-
մուսին և սիրելի փեսային:

Սրամտութիւն:

— Կալուօշ, որո՞ւն կարել կուտաս զգեստ-
ներդ:

— Միռի՛ն:

— Ամա ըրիր ա', հապա Երուանդ Մի-
րիճանեանը չէ՛ր քու անձնական դերձակդ:

— Նորէ՛ն անիկա է ... բայց ես Միռի-
ճանեանի անուանին առաջին վանկը միայն
կ'առնեմ, Միռ, և անդին մնացած իճանեանը
կը ջնջեմ, որով միշտ ... «Միռ»-ին կարել
տուած կ'ըլլամ զգեստներս, առանց Միռ և Գո-
քքոին դռնէն ներս մտնելու:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ազնիւ Խմբագրապետ,

Նիկոմիդիոյ Հայ. Աւետարանականներէն
մենձ աղայի հովերով փքացած 1-2 աւձեր՝
եկող-գացող հոգեւոր պաշտօնեաները իրենց
եսին հպատակեցնել ջանացած են, և հակա-
ռակ պարագաներուն հնարամիտ զարձուած-
ներով շատ անգամ անոնց հրաժարման
տեղի տուած են, այժմու վերապատուելի
հովիւն ալ՝ որ լուրջ, համակրելի և ձեռնհաս
պաշտօնեայ մ'է՛ իբր նկարագրի և սկզբուն-
քի տէր մարդ այսպիսի մենձ աղաներու ա-
րարքին չ'կրնալով հանդուրժել 908 Յուն-
վարին հրաժարականը մատոյց Գաւառ. Ժո-
ղովին, սակայն Գաւառ. Ժողովը հակառակ
երկու անգամ նիստ գումարելուն՝ վերա-
պատուելին հրաժարականը տակաւին նկա-
տողութեան առած չ'է, մասնաւորներու կիր-
քին հանրութեան շահը չ'զոհելու նկատմով:

Անցեալ շաբթու Նիկոմիդիոյ Հայ. Աւետ.
Ընդհ. Ժողովուրդին մեծամասնութիւնը
քուէարկութեամբ իրենց հովիւին օգտակար
եղած Ըլլալը յայտնեցին, և այդ քուէարկու-
թեան մասնակցեցան նաեւ կիները՝ Վարչա-
կան Ժողովի առաջարկութիւնով և Ժողո-
վրդեան հաւանութեամբ: Այսպէսով հմուտ
հովիւին պաշտօնավարութեան արդիւնաւոր
կատարումը և Ժողովրդեան մեծագոյն մա-
սին վերապատուելին հանդէպ համակիր Ըլ-
լալը երեւան գալը տեսնող հակառակորդ
մենձ աղաները եսերնուն վիրաւորումը տե-
սան, նամանաւնդ քացիկ պարոնի մը ջի-
ղերը դունդ ելան և այդ առթիւ զգացած
սաստիկ կիրքին յագեցում տալու համար մեր
սիրելի Հանգրազիսակը անցեալ շաբթու իրեն
կիրքին օռկան ըրած էր իր անարգալից հե-
ռազիրովը, սա՛ միամիտ յաւակնոտութեամբ
թէ՛ Հանգրազիսակի անաչառ խմբագրապետը
ներողամիտ պիտի գտնուի իր այդ արարքին
և ճշմարտութիւնը պարզած ատեն իրեն լաւ
դաս մը չ'պիտի տայ:

Իզլիլիս

ՆՈՒՆՈՒՅԱՐ



ԷՆԿԻՆԱՌԻՆ ՀՐԱԻՐԱԳԻՐԸ

[ՊՕՂԱԶԱԻԵՐ ՅՕԴՈՒԱԾ]

1908 տարին, նիւթականի և ուտեստի տեսակէտով որչափ սղութիւն, սակայն կըրթական և եկեղեցական կրկնակ պարագայներուն մէջ ալ նորոյթէ նորոյթ կը քաշէ զմեզ: Քառաձայն դպրաց դաս, միւզիքով պատարագ, պնակներու բարձումը, բան մը որ առաջ գաղտուկ կըլար, հիմա յայտ յանդիման, աղքատախնայներու համար տասը բժիշկ (.) տասն ալ (.) դեղագործ, աղջիկ դպիրներ, ուսուի նուռնիմա երգեցողութիւն, concert enfantin, և իւրումն ամենեցուն ... անքոռիի քապլ s'op:

Ու տակաւին կը գանգատիք հէ՛...:

Մեր եէտի-գուլէի Հիւանդանոցը, որ տարիներ առաջ աղքատ և չքաւոր երկսեռ հիւանդներու դարմանատունն էր ինչպէս նաեւ անկեալներու պատսպարանը, ժամանակի ընթացքին մէջ եղաւ անանկ եղաւ որ մեր է՛ն ձեռքը բերնին համադրներուն անգամ բերնի շողիք վաղցնելու աստիճանին հասաւ, շնորհիւ նորոյթներուն, որոնք բուռնի ձիւրուն պէս զիրար կը հալածեն կոր:

365 օրը մէկ անգամ սովորութիւն էր սեղան մը սարքել ի պատիւ (հայտէ ի նպատակ) ըստի, քանի որ ծայրը պիպիշ կայ) հիմնարկութեանն հաստատութեան, և այդ սեղանէն կ'օգտուէին, այսինքն չէօբէնմիշ կըլային ամէն անոնք որոնք տարուան մը մէջ մէկ անգամ օլտուն տաւոց մը ձգած էին գանձանակը որ կեօպիւկիւ մարդուկ մը օրն ի բուն կը պտըտցնէ հոս հոն, առանց հաշուելու ամբողջ պաշտօնէութիւնը, ջոշէն մինչեւ պոչը, որոնք 365 օր հոնկէ ուտել խմելէ զատ այդ սեղանին ալ կը մասնակցին ոտքով ձեռքով: Բայց տեսէք այս տարուան լէյլէկը ինչ նորոյթ է բերէր:

Տոմսակի ձեւ նամակներ իբր հրաւիրագիր ո՛չ թէ բարերարաց յիշատակին եղած պատարագին, ո՛չ թէ նուիրական օրի մը հանդիսատես ըլլալու, ո՛չ թէ մեր Պատրիարք

Սրբազանին հմտալից քարոզը մտիկ ընելու, ո՛չ թէ ասոր՝ ո՛չ թէ անոր, այլ պարզապէս պաղին էնկինառները ուտելու համար:

Sus-dit հրաւիրագիրներէն չստանալէ զատ, հատ մ'ալ ձեռքս չանցաւ, սոյն նորոյթը յըղացող մասնախումբը կանխամտածումը ունեցած ըլլալու է թէ Լիւան՝ էնկինառի մը և դգալ մը հէլվայի համար փրկիչ չերթար, և չիտակ է, բայց կարծեմ թէ սապէս գրուած ըլլալու է այդ թղթիկներուն վրայ:

Skr,

Ձերդ Ազնուութեան ստամոսին հաշակը քաջաճանօք ըլլալով, կը խնդրեմք որպէս զի Ձեր պատուաբեր ներկայութեամբ պատուեմ Հիմնարքիի սեղանը:

Կը խնդրուի նախապէս քաջախ չի խմել: Բարաքեսով գառան միսին պատուաւաղ պիտի զարմուի ժամը ճիշդ 5 1/2 ին:

Միայն մեկ ստամոսի համար:

Փրկիչ

Փրկիչ

Եթէ արտառոց դտնեն սոյն նամակը, և ըսեն թէ պարունակութիւնը՝ այդպէս չէր, այն ատեն պիտի ըսեմ որ եկեղեցիի, աղօթքի և պաշտամունքի համար հրաւիրագիր չըլար, քանի որ Աստուծոյ տունն է, և արդէն օրը օրին թերթերը չի ծանուցին թէ սեղանին մասնակցողները մասնաւոր հրաւիրագիր պիտի ընդունին, լիքօն ...

Բայց ձգենք որ մենէ աղէկները, որոնք մէկ մէկ մատ պոյ նետեցին հրաւիրագիր ստացած ըլլալուն համար, մարտէն գուրաւ Երեւան հէլվան, պատմենք այդ օրին հոն անցածն ու դարձածը, քաջ գիտնալով որ մեր փափկաճաշակ ընթերցողները մեր գլուռած ընթերցն աւելի համ կառնէն քան թէ գէյքին եաղը կնկիմառեն:

* * *

Ժամը ցերեկուան հինգն է, չուքին մէջ ոչ թէ հաւկիթ՝ այլ բաշտ խաշերով չափ աւաք՝ մը կընէ։ Պոլսոյ չորս հովերէն ստամոքսի ուխտաւորներ, որոնցմէ չատը մասնաւոր ազգաբարձութիւնը կարգացած չէ, խռնուած են պարտէզը, մինչ բանի գործի վրայ վարակելաներ բէշերնին թոցնելով մէկ ծակէն կը մտնան միւսէն կ'ելլան, առանց գիտնալու թէ ուր պէտք էին երթալ և ինչ պէտք էր ընել։ Կծու քրտինքի մը հոտ գլած անցած է պարտէզին ծաղիկներուն բոյրը, մինչ ամպ գոռալու պէս ընդհանուր կուռուլտուք մը լսելի կըլլայ ամէնուն փորին մէջ։

Լայնասփիւռ սեղանը, որ արանց բաժնին մէջ ձգուած է, պատրաստ կը կենայ բերնի ջուր վազցնել տալով ամէն անոնց, որոնք անկուտի թատրոն գիտելու պէս ծակծուկերէն ներս կը նայէին։

Հապա խոհանոցը՝ վարպետ աղբարը թեւերը սոթթած՝ կրակ կտրած է կրակին դէմ, ու մարդ համարձակութիւն չունի երկու խօսք փոխանակելու հետը, այնքան վերայ դրած է խուլը, ու անդին չորս հինգ եամախներ (օգնական) բաղնիքին ներսին պէս քրտինք կը թափեն, տաքէն աւելի՝ վարպետ աղբորը վախէն։

Երկու վայրկեանը մէկ անգամ հրամաններ կը տեղան, հարցումներ կուղղուին, դիտողութիւններ կըլլան, որոնց ժողովրդական ճանապարհածութեամբ (?) կը պատասխանուին վարպետին կողմանէ։

Դուրսը, պարտէզը, երթալով բազմութիւնը կը խռնուի, կիներ, օրիորդներ, միւսիւններ, լաճեր, լակոտներ, հարուստ, աղքատ, միջակ, ամէն կարգի ներկայացուցիչներ իրարու ետեւէ կը հասնին, մանաւանդ հաստատութեան դէմի պարտէզը, աննկարագրելի խրախճանութիւն մը կը տիրէ, ուր փռուած են՝ մօտաւոր թէ հեռաւոր թաղերէ երկսեռ ներկայացուցիչներ բոլորն ալ իրենց սեզօնի նորոյթները հագած։

Հասեալ է ժամ։

Տնօրէնին մասնաւոր հրաւերին վրայ, բոլոր հրաւիրեալները սեղանատուն կը մտնան և աթոռները կը գրաւուին, մինչ դուրսը։

Ահա խնդիրը ուրկէ կսկսի մեր պատմեալը։

— Բարի լոյս, կըսեն երկու երիտասարդներ՝ կոտորտնելով, հոն կեցող պաշտօնեային, որ տոմսակ կը խնդրէր քաղլի s'opին համար։

— Ասծու բարին, տոմսակնիդ ...

— Քօնսէնի չենք եկած, ներողութիւն, սեղանին մասնակցելու համար եկած ենք։

— Չըլլար, տոմսակ, հրաւիրագիր բան մը ունիք ...

— Խնդրեմ, կատակը մէկդի, մասնակցիլ կուզենք ...

— Աղէկ ամա, աս տարի ասանկ է, լըրագիրը չի կարդացիք ...

— Բայց մեզի համար ալ, մենք գրչի աշխատաւորներ ենք, մենք լրագրի յօդուած կուտանք, մենք ալ համայնքին ղաւակները կը սեպուինք ...

— Չըլլար ըսինք եա, նայէ թէյղէիս տղան անօթութենէն աչքերը խալխա խալխա եղեր է տէ չեմ կրնար կոր ներս առնէր ...

— Բայց այս կարգադրութիւնը նոր է ...

— Նոր է ամա, ինչ ընենք, ասանկ տնօրինեցին ...

— Բայց մենք պիտի գրենք ասոր դէմ ...

— Շատ աղէկ կընէք, գրելու ըլլաք նէ իմ թառափէս ալ չիքեանէթ ըրէք, ամա հիմա ներս մի մտնաք ...

— Սաֆու ցօն քը քօնցի՛ն ... ըսելով կը հեռանան հոնկէ, ծառի մը տակ քաշուելով՝ խելք խելքի դիտողագիր մը պատրաստելու համար, ուր փոխանակ այդ նիւթին վրայ գրելու՝ հոն պտըտկող օրիորդի մը աչքերէն ներշնչուած՝ ոտանաւոր մը կը մրոտեն։

Ուրիշ պատկեր մը։

— Քուզում աղբարիկս, չօճուխս, երուանդիկս հիւրնտութենէն նոր ելած է, ձգէիք տէ մտնար լոխմա մը պան ուտէր ... կըսէ տիկին մը քրտինքները սրբելով։

— Հոս հիւանդանոց է ամա, լօքանթալ է մարիկս ...

— Տէր ողորմեա ըսէ, խուզիլին հոտէն որ սահաթ է քիթս ինկաւ ...

— Խօլթուխիդ տակի քրտինքը հոտմտայ բան մը չես ըլլար ...

— Քա ճանըմ, աստեղը տարին հեղ մը հոգու մանճա չէք ի տար ...

— Հա ամա, աս տարի պիլէթով է ...

— Թէաթոս չէմ ի գար կոր ... սուֆո-
ռաին ծարիրը նստի տէ, ես վրոս լոխմա մը
պան պերանը դնէ պիտի ...

— Չըլար մարիկս, ինծի թէնպիհը ա-
սանկ է քի պիլէթ ունեցողը ներս պիտի
առնեմ, աս տարուան սուֆոնան պիլէթի է։

— Ընհ ... խուղիի պոչից մը իլէն,
սալը էնկինառ մը չէ տալիքնիդ ... ձեզի
ըլլայ, քալէ ծօ Երուանդ ... ես քեզի կ'ե-
փեմ ... ամա բէք վիճտանսըդ էք եղէր,

չօճուիւր անօթի ձգեցիք տէ հիշ բուժուռնիդ
պիլէ չէ, ըսելով տղան կ'առնէ կը հեռանայ։
Երիտասարդ մը ակնոցաւոր, գօգուռու-
թաշկինակովը ոտքին փոշիները առնելով

ներս մտնալ կը պատրաստուի։

— Տոմաս'կ, հրաւիրագիր ...

— Նստեցան, սեղանը սկսաւ ...

— Տոմաս'կ ...

— Միւսիւ կուռնէլիոսը ներս նէ, եկաւ,
ես քիչ մը ուշ մնացի ...

— Հրաւիրագիր սիրելիս, տոմասկը տուր
տէ, կուռնէլիոսը կոկորդիլոսը ներս նէ է
կը տեսնաս ...

— Բայց շատ աղէկ խելք են ըրէր սա
հրաւիրագիրը, ան ինչ էր եղբայր, հասնողը
ներս կը լեցուէր կոր ... ըսելով միւսիւն կը
շարունակէ իր թուալէթը։

— Հայտէ ճանրմ, ես ալ անօթի եմ,
պօշ լաֆ ընելու ճար չունիմ, պիլէթըդ տուր
տէ ներսը չտկէ պըլըխներդ ...

— Ձարմանալի բան, արդեօք ո՞րչափ
բացը մնացող եղաւ այս տարի ...

— Տէր ողորմեայ ինձ Աստուած ...

Միւսիւն ծովի պանեօն մտնալու պէս
ներս նետուիլ կը փորձէ, մինչ դուռը կեցողը
աբգիւելով,

— Հասկցայ քի փորձանք մը պիտի հա-
նես գլխուս, չըլար ճանրմ ...

— Ինծի ալ ..., ինչ ալ հրաւիրագիր
կուգէ կոր ... չօգ չէ՞յ ...

— Հրամմեր ես, որ սահաթ է մասալ
կըսենք կոր ...

— Բայց ես ծանօթ դէմք մըն եմ, և թէ
յանուն գրականութեան գիր մը պատրաս-
տած եմ գոր պիտի կարդամ ...

— Ձահմէթ մընէր, ներսը անխտար կար-
դացող կայ քի, քուկինդ սիւրի սինէկի
Վալմիլը պիլէ չպիտի գայ ...

— Բայց կատակը մէկդի, ամբողջ շաբաթ
մը աշխատած եմ այս ճառին վրայ ...
— Վա'խ, վա'խ, վա'խ ...

— Ըսել է անպատճառ տոմասկ պիտի
տրուի ...

— Հիշ չիւփիէ մուսննար ...

— Շատ լաւ միւսիւ Գ. ինծի կանչեցէք ...

— Էնկինառին նոր պաշայեցին չեմ կըր-
նար ...

— Լաւ միւսիւ Փ. ը ալ հոս չէ ...

— Պէ ճանրմ ես դպրոցի տնտես չեմ ...
հայտէ բանըդ գնայ պէ' ... աս տաքուն,
գործ չունի'ս հրամանքդ ...

— Բայց վերջէն պիտի հրաշարակեմ այս
խնդիրը ...

— Նա', սա ծառին տակը չիֆթ մը նըս-
տեր կը գրեն կոր աս գործին վրայ, դուռն
ալ գնայ տէ սաճ ալաղի եղէք գրեցէք ...
գրած ճառըդ ալ, Ալէմ-տաղի երթաս նէ հոն

Յովակիմին սուֆոնային վրայ կարդայ ...
Ուրիշ բասաժ մը։

Երեք հոգի կուգան կը կենան դրանը մօտ։

— Բարի լէօս բարեկամ ...

— Ասծու բարին ...

— Վախեմ սեղան նստած եին ...

— Այո', ուշ եկաք ... բայց հոգ չէ ...

հրաւիրագիր ունի'ք ...

— Հրաւիրագիր մի ջընէանք էֆէնտըմ
ըմմա' ... Թէօրէօս էմմի, տա թղթիյ մի
կար գրպանըդ վրադ է իսէ տիւր ...

— Ընհա, ըսելով կը ներկայացնէ։

— Աղէկ ամա աղաներ, աս մէկ հրաւի-
րագիր է, հէմ ալ ուրիշինն է ...

— Հրամանք է էֆէնտիմ, հմայէկս տիւ-
րիւսթը ասենք ուր, ըս էֆէնտին չի տի գար,

մեզի ասէց իւր ելէյ գնացէք, կերէք խու-
մեցէք, մենք էլ է'ն միւսիւսըք եկանք,

բորս ալ կուռ կուռ կանէյուր ...

— Ճանրմ աս մէկ հոգիի համար է, դուք
երեք հոգի ելեր եկեր էք նէ' ...

— Հրամանք է, ըմմա, հէրիւ քօնցօլ-
թաին ուր գնացինք իսէ, էս մուսիւսըք

Թէօրէս էմմիին ձեռքը պիլէթ մի կար ...

— Ճանրմ, մասալ մտիկ ընելու վախիթ
չունիմ ...

— Քէրէմ արէ էֆէնտըմ, ուր էնճամը
միւսիւսըք հասկացընիմ իւր շախսը քէմթէ-

բիւս խէօսքը տեղն էրթի ... իշտէ ըն օրը մենք երեք հոգի էանք, հէմ ալ կնիյնիս էլ միասին թըմամ վեց ֆէօքի ներս մտանք, աս օր մեր կնիյներն էլ պարապար չեկան, էլ ինչ կու կալիս ...

— Կլելիք բան չիգայ հաճի աղա, աս քօնսէն չէ, աս մասնաւոր սեղան է քի մէկ հրաւիրագիրով մէկ հոգի կրնանք ընդունիլ ...

Նոյն միջոցին սպասաւորները իրմիկ հէլ-վասին ներս կը տանէին,

— Մօ՛ Մարգար էմմի հէլվան տեսա՛ր... խորոտ չէր ... էօր ձգէ իսէ մենք ալ տի խաչուխ նիէտանք ըմմա՛ ...

— Չըլար, մէկէնիդ մինակ ներս կըր-նաք մտնալ, օրէնքը ասանկ է ...

— Թըմամ ... գանձանակ կու պտըտցը-նէք, մէկերնիս իւր դրամ կու ձգէ՛նք իսէ չիք էրթար, հըպա՛, կուզէք իւր էմէնքս էլ գատ գատ փարայ ձգինք, հըմա նասըլ կըլլի իւր մէկ հոգիով սուլֆը կըլլիք ...

— Հրամանը ասանկ է աղաներ, ինչ Ը-նենք աֆ կընէք ...

— Էօյլէ իսէ ըսկէ էտեւ, էօլ վէօր ըս օր եկաւ ու ֆէօս սեղանակից եղաւ ու տիւք էլ տավէթնամէ մի թահրիր արիք իւ ընդու-նեցաք, էնոնց գացէք իւ փարայ ուղեցէք էօր տան, միենք փարայ չիտի տանք ... ներսն իւր խաչուխներիւ ձան կիւքիա ը-տանք, մէթալիք չեն ի տար, մենք էնք իւր հէմ պիր տիւզ փարայ կուտանք հէմ ալ է-տանք անօթի շան պէս դուռնէն ներս առըմ նետել չէք ի տար ... քալեցէք էֆէնտիմ քալեցէք, պախալ Գօզմօսին երկնանք ...

Խոհանոցին մէջ:

— Վարպետ, Տնօրէնը ըսաւ քի, ես տահա չեմ կերեր, ինծի խուզի պահէ ...

— Ես խուզի ըլլալու չէի ... եղածը հոս է ...

— Վարպետ, Խնկիլիդին աղջիկները էն-կինառը բուռէ կուզեն կոր ...

— Էնկինառը բուռը կըլլա՛յ մի ճանըմ, ասոնք ալ պա՛շ պէլասի եկան ...

— Վարպետ, հէլվան քիչ եկաւ, Թա-պախ մըն ալ տուր ...

— Վարպետ, լօբ բառչա միս մը, սանկ քէնար մը դիր, մասնաւորի է ...

— Վարպետ, էնկինառէն երկու հատ դատ Թապախ մը դիր տէ տուր ...

— Վարպետ, հիմակուան տուած միսիդ քովը բաթաթէս չես դրէր ...

— Վարպետ, վարպետ, սըտեղը քիչ մը սալցա, սալցա ...

— Վարպետ, ան քի գիտես նէ անոր կերակուրը չի մոռնաս ...

— Վարպետ, շուտ օսկօղու կտոր մը ...

— Վարպետ, չորս բառչա քիւլպաստի, մասնաւորներու ...

— Վարպետ, խուզիին ճիւղէն երկու կը-տոր սկառա մասնաւորի ...

— Վարպետ, խուզիին կլոխը պահէ կը-սեն կոր, իրիկուան դէմ պաղ սէօյիւշ պիտի ուտեն եղէր ...

— Էյ ճիւղէրս թող ուտեն, չըլտըրաճաըմ պէ՛ ... աս տարի պիլէթով պիտի ուտեն ը-սիք, տահա պէթէր խառնշտըկեցիք պէ՛ ...

— Վարպետ, էնկինառին սազերը աղւոր չես քաշեր տէյի դիտողութիւն կընեն կոր ... կըսէ պաշտօնեայ մը մէկ ձեռքը հաց միւսն ալ միսի կտոր մը բռնած աղըզ տօլուսի խո-հանոց մտնալով,

— Պատի հալա կըշտացա՛ն տէ հիմա աղ բիւրիւզ կը հանեն կոր ... չի հաւնողը հեղ մ՛ալ թող չիգայ, վաղ կէշտիք ...

— Վարպետ, քրտինքդ սրբէ, կերակուր-ներուն մէջը կերթայ կոր ...

— Հոգ չէ, աղը քիչ եմ դրեր զաթը ...

— Վարպետ, մասնաւոր շնորհակալու-թիւն յայտնեցին քեզի համար ...

— Ուճընտա պիր չէյ վա՛ր մը ... օնա պագալըմ:

Նոյն ատեն քիչ մը posant ձայն մը կը լսուի խոհանոցին մէջ,

— Վարպետ ...

— Էֆէնտիմ ...

— Հինգ հոգիի համար շնորհքով եաղը կտորներէն խուզի քէպապի մը չինէ, տասը հատ էնկինառ, Թապախ մըն ալ հէլվա, Կի-րակոսին տուր քի դիմացի պախճան սէօյիւ-տին ծառին տակը մերկները նստեր են հոն տանի, ետքէն ալ չորս հոգիի համար թըպ-խըսըն պիտի հազրը ընես, ես կուգամ իմաց կուտամ ...:

Ու ըսել թէ այս տարի նկատի առնելով անհամար ու բացառիկ ինքնակոչ սեղանա-կիցները, մասնաւորներու հրաւիրագիրներ զրկուած էին, որպէս զի համայնքին տունը ծաղքերու չի մատնուի հէ՛ ...:

ԼԻԼԱ

ՍԵՄԵՏՈՒԿՆԵՐ

ՀԱԶԱՐԱՊԱՏՈՒՄ

[ՍԷՆՊՈԼԻՔ ՏՈՂԵՐ]

Մեկը չէ՛ եղած, որ հիւսէ ներքող
հազարի՛ն վրայ հնչեցնելով փող,
ու մինչեւ հիմայ, սարէն ու ձորէն,
կը հառեն կոր, ո՛հ... բանաստեղծօրէն
եւ ֆերթեն՝ կոյս, բոյս, վարդըն ու սոխակ
Մ. Պարսամեանէն մինչ Ռուբէն Սեւակ
(մէջն է նաեւ մեր, Հրաւնդ Նազար...)
ու չգիտե՛ն, աւա՛ղ, անդին Հազարը
քէ ֆերէ իրենց՝ մէկ պու հազարը,
քէ ինչո՛ւ զինքը բընաւ չեն յիշեր
ըլլա՛յ ցերեկ կա՛մ բող ըլլայ գիշեր...
ու չե՛ն գովեր ո՛հ սերեն իր գմբուխս,
մե՛ղք որ Պառնաս լեռ, կերթան ընել ուխտ:

* * *

Պէպէք, մանչ, աղջիկ, երկէ մարդ ու կին,
օրհորդ Զապէլը հետք Վարդուկին,
այնինչին թալը, կեսուրն ու ներք
— սա՛նկ երկնցուցած, քիչ մը ոտները —
եկնիգաբուցիք, գեր, նիհար ամեն,
շաւս սփանցած մառունչին համէն,
կուտեն ու կուտեն խի՛ս անյագօրէն
Պարոն Հազարին հասունցած օրէն...:

* * *

Դեմ առ դեմ դրուած, խաչասներ երկար
ուր նստին բազմին առողջն ու անկար
ծեր, մարդ, կին, մանուկ, աղջիկ երեսարդ
շաւեր մանաւանդ կանանց նետեն կարք:
Արբաքիին հետ Արաքիամ աղան
աղաներնուն տակ, շուրս մառունչ կ'աղան:
Հայու կընդիկ կասարեալ քիփեր
ամենքը եկեր հոն տեղն են բափեր...:

* * *

- Ծօ՛՛ ծօ՛՛ պանա պագ, կեօպէսիգ չիր նե:
- = Օն փարայ վերսին, նե՛ իսքերսին նե՛:
- Միւսիւին մէկն ալ ճենքընկնաբար
- Պահչեպան պանա երմիչիք գօբար:
- Մի՛ խպնիր կե՛ր ֆա՛, քուար է քուար,
հեմ մենն ֆայտայ է պօղազիդ հաւար...:
- Անա ի՛նչ մառունչ, կերայ կուտ ու կուտ
փորս ալ պաշայնց ընել կուտ կուտ կուտ:
- Քա մարի՛կ մեջէն սայլանկո՛ղ ելաւ...:
- Ա՛, բայց օրհորդ, հազարն է խիս լաւ...:
- Նայէ՛ Սեբուհի, տա՛ պարոնք որ...:
- = ...որ հայկանի պէս մառունչ կուտ կոր:
- Զօգ արծազ հրէի, պու կիռն ֆայմենի:
- Զարուկ ալ կապուինք կապով Հիմենի...:
- Հապա կոչանք՝, մայրիկ ո՛ւր նետն
- Տուր ինծի խենդ տուն, ես ան հոս կուտեմ՝
շիւնֆիւ մառունչին համիկը հոն է...:
- Բայց օրհորդ սըւո՛նք ուտիք գոնէ...:
- Քա վո՛ւյ առ ինչ մարդ ֆա հի՛ առ ինչ մարդ
խառք ու խուռք խառք խառք
խառք ու խուռք խառք խառք
- Պաւտելի՛ հուրիս, ի՛նչ բոնեմ վրկայ
որ արիս խորը, կրա՛կ, հոգեհ կայ...:
- Հազար մընալ կեր բոցը կը մարէ...:
- Նստի՛նք պարոններ, սա՛ տեղ յարմար է:
- Ամա՛ն Պետրոս, ֆա տաա՛ք. Պետրո՛ւ
- Քա՛ տղ մեկար կե՛ն, հիմակ հոս էր հոս,
ծօ՛ Պէյրօս, Պէյրօս, ծա՛ն հանէ Պէյրօս...:
- Մա քի՛ հրաք...:
- = Խաքիֆի մօրօս...:
- Պօստան խույուսին ֆա՛ ինկած չըլլայ...:
- Քա մըսեր, տա՛նա պէքեր պիտի լայ...:
- Հա՛. նա եկաւ ֆա, առ ի՛նչ տղ ելար:
- Ո՛հ, քրթաւուցիք իմ արիկիս լար...:
- Ինծի նայէ մարդ աչերըդ խըփէ...:
- Է՛հ մեռա՛ւ մեծըն Ֆրանսուա Գօբէ...:
- Է՛օ՛, առ ինչ տաղը մառունչ է պէ տա.
- = Մազպուշ շէյի չիր, պէյազ չըր պէյա՛զ:
- Է՛ն ալ հաւնեցաւ, աւելըդ լուս է՛ֆուազ,
ամա սա բոնմ չըլլաք ընեք նազ:
- Հայտէ ալ ելլանք, մուրք պաւայեց
վեց հաս կերանք հե՛, վեց հաս, մառունչ վեց:

- Քա ինչո՞ւ ծառփա զարկիր ձգեցիր
մառուշքս բօսբալ, կեցիր տուն կեցիր:
- Օրիորդ կարդացի՞ք Զօլայի Նանան
- Բայց կամաց քսե՛ք, չեղան իմանան:
- Ծօ՛, Աստուածածնին, պիտե՛րգե Մանաս:
- Հայտե՛ք, փալեցե՛ք, փա՛ հի՛շք, կիմանա՛ւ:

* * *

Հոս հոն պօսաններ, «Աղջիկեսներն» ալ
որուն խաչաններն սկսած են հիմնալ,
այնքան անհամար հոն գործ կեփի որ,
բա՛ն, որուն համար, են երախտաւոր
Գումգաբուցիք ու Եկեղեցաբուցիք՝
աղջիկներ մանչեր, դրած բարձր օծիկ...:

* * *

Ո՛վ դուք, բրնակիչ, Եկեղեցաբուր
որ վախցնէ ձեզ... ողբերգը բուրի,
երկնային պարգեւ մ'ե՛ ձեզ յիշի
սարեկան բերք կանանչ մառուշի...:
Դուք ունիք, գիտե՛մ, Սուրբն թաղեոս,
եւ անբաժան իր՝ Սուրբ Բարթողիմէոս,
որոնք կորհնեն միտ ու են պահապան
Ձեր պօսաններուն (մէջն է պարսիկական
Մառօք, Գառնիկը, Տիմիթրոն, Եօրկին,
Իրենց ձագերը, նաեւ իրենց կից...):
Վարժարաննիդ ալ պօսանի մ'ե՛ կից,
հազարներն ալ են, ո՛հ, բնկերակից
ձե՛ր զուակներուն, թերեւս մրցակից.
բայց չե՛ն ուտեր, ո՛չ, ասեմ ասեմ ... կից:

* * *

«Հանրագիտակ»ի «Լիլա» զարդ բեմեն,
պիտի գովեմ ես՝ Լիլան, Եւփիմէն
եւ ժափահարեմ, բայց ասոր մասով
յայտնելու համար հիացումս ասով,
անա՛նկ շնորհալի մառուշ մը կերան
որ ամեն մարդ լա՛յն բացաւ իր բերան:

X

Խնդրակասարին աղօթել գացի՞ք
ո՛վ բարեպաշտ կից-Եկեղեցաբուցիք
որ պօսաններունդ հողը բարեբեր
վարունգներուն ալ ուժ տաւ եփեր...:

ԱՆՄԵՌՈՒԿ



Ք Ր Ո Ն Ի Կ

Առանց ընտանեկան յարաբերութեան կը
պատահի որ երիտասարդ մը ու եւ է պատ-
րուակաւ այցելութեան կերթայ տուն մը,
ու հոն քաղաքավարութեան համար իրեն
ընծայուած պատիւներուն տարբեր տարբեր
մեկնութիւններ տալով կ'սկսի անդին ասդին
տարածախնութիւններ հանել, անշուշտ մեծ
հաճոյք մը զգալով ասոր մէջ:

Դժբաղդաբար մեր համայնքին մէջ այս
կարգի մարդիկ մատի վրայ չեն համրուիր:

Քանիներ կ'ուզէք որ հոս մասնանիչ ը-
նեմ, քանիներ, որոնք իրենց բանասերու-
լեզուով բարոյապէս կը մեռցնեն շատ մը
խեղճեր:

Կը գտնուին այնպիսիներ ալ որոնք՝ ըն-
տանեաց կողմէ տաք վերաբերում մը տես-
նելով աղատ ասպարէզ կը գտնեն ուզած-
նուն պէս տունէն ներս մտնել ելլելու:

Միւս կողմանէ այ օտակայն, մեր մայրերը
տակաւին չեն կրցած հասկնալ թէ ի՞նչպէս
կը մեծցնեն աղջիկ զաւակ մը, ու շատ ան-
գամներ երիտասարդի մը ըրած արտաքին
ցոյցերէն խաբուելով եւ կամ աւելի ճիշտը
բաներ մը ակնկալելով բոլորովին կը յանձ-
նուին՝ առանց զգալու ապագայ անտեղու-
թիւնները:

Եթէ կը հաճիք օրինակով մը ներկայա-
ցնեմ ձեզի այս կարգի դէպք մը:

Տիկին Ա...: Եան կը բնակէր Պոլսոյ ար-
ուարձաններէն մէկուն մէջ իր մէկ հատիկ
բառին ընդարձակ առումովը գեղեցիկ աղ-
ջկանը հետ: Ամուսինը շատոնց կորսնցուցած
էր ու կ'ապրէր անոր ձգած բաւական կոկիկ
ժառանգութեամբ: Աղջիկը Օր. Բ. իր գե-
ղեցկութեան համապատասխան մտքի զար-
գացում մ'ալ ստացած էր ու բացի մայրենի
լեզունէն տեղեակ էր նաեւ Եւրոպական մէկ
երկու լեզուներու:

Կարծեմ ասանկ հազուադէպ առաւելու-
թիւններով օժտուած աղջիկ մը այնչափ
դժուարութիւն չի կրեր կարեւոր դիրքի տէր
երիտասարդի մը հետ ամուսնանալու հա-
մար՝ հակառակ այս դարուս դրամօժիտը մեծ
դեր խաղալուն:

Մէկ կողմէ հօր մը պակասը, ու միւս կողմանէ մօրը անփոյթ վարմունքը պատճառ եղած էին որ խեղճ աղջիկը ուզածին պէս ապրէր:

Մարդ ազատամիտ ըլլալու է կըսէր Տի-կին մայրը, ինչ կարեւորութիւն ունի, թող ուզած երիտասարդին հետ տեսնուի աղջիկս, հերիք է որ պատշաճութեան սահմանին մէջ ըլլայ: Բայց մեր ըմբռնած այդ պատշաճութեան սահմանը՝ իյնալու տրամադրութիւն ունեցող կարգ մը կանանց պէս, փոխուելու համար պզտիկ մահաւնայի մը կը նայի:

Իրա՛ւ, ազատ մտածումը շատ լաւ բան է, բայց դժբաղդաբար հիմակուան երիտասարդաց քով դժուար է գտնելը:

Մենք ոչ կարգ գիտենք ոչ կանոն:

Ինչպէս որ մեծանուն երգիծաբանը Յ. Ալփիար ըսած է թէ՝ կիները քիչը չեն հասկընար, անանկ ալ մենք պատշաճութեան սահմանը տակաւին չենք կրնար որոշել:

Դիւղին երիտասարդաց ալ բան մը պէտք է, գեղեցիկ աղջիկ, ազատամիտ մայր, ալ ասկէ աւելի պէլաք պիտի ուզեն, ուստի կատուներու պէս կը սլքտան աղջկան չորս կողմը ու ոմանք ալ կերպը գտնելով այցելութեան կերթան օրիորդին տունը:

Բամպակը ու կրակը որչափ ալ լաւ ապահովուած ըլլան՝ նորէն ենթակայ են օր մը բռնկելու, ո՛ւր մնաց...

Նիւմէոօ 1 պարոնը առաջին օրը պէտք եղած վարմունքովը կը ներկայանայ, երկրորդ օրը խօսակցութիւնը քիչ մը կը փոխէ իսկ երրորդին արդէն երես ելած է:

Այսպէս կը շարունակուին նաեւ միւս այցելուները:

Հայ պարիթ ըլլայ ասանկ ալաֆրանկան:

Առանց երկար բարակ գլուխ չինելու, յորուն ոչ տրամադրութիւն ունիմ եւ ոչ ալ սիրտ, սա չափը ըսեմ թէ օրիորդը վերջերս նշանուած էր երիտասարդի մը հետ:

Հիմայ կը պատմեն թէ՛ խեղճ աղջիկը Չլային հիւանդութեան մը ենթարկուելու է նշանը ետ ըլլալուն համար:

Երտակը ըսէք, ցաւալի ու արգահատելի չէ՛ այս վիճակը: Յանցանքը որչափ որ աղվատ երիտասարդին կողմն է, սակայն, ես պիտի համարձակիմ իբր պատասխանատու

ճանչնալ աղջկան մայրը, որ չկրցաւ ժամանակին գուշակել՝ ազատամիտ ըլլալու հետեւութիւնները:

Մեր մայրերը եթէ ուզեն կրնան լաւ դատ մը առնել այս օրինակէն:

Աս տղան ալ այսօր ուրիշ բան մը չէ գտեր, ելեր շան քարոզ կը կարդայ կոր, պիտի ըսին թերեւս ընթերցողներէս ոմանք, ինչ կուզեն թող ըսեն, ես զգացածս է, որ գրեցի, դժբաղդաբար:

Նոյն իսկ վստահ եմ թէ սիրելի բարեկամիս ԼիլԱին սպասած յօդուածը չէր այս օրուան ստորագրածս:

Չէ՞...

ՆԵՐՇԱՊՈՒՂ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆ

ՂԱԼԱՌԻԱ

Ժ.Ա.ՄԱՆԱԿԱՅԱՅԱՆ

Բերանացի հարցաքննութեանց 1907-1908 շրջանի
ընթացաւարտ կարգին

— 0 —

1908 Յունիս

2 ԲԵ. — Բրիստոնքուք. պատմութիւն.

4 ԴԵ. — Հայերէն գրաբար. — Եկեղ. մաս. պատմ.

6 ՈՒՐ. — Օսմանեան, Արաբեան, Պարսկ.

9 ԲԵ. — Ֆրանսերէն. — Ֆրանս. մաս. պատմ.

11 ԴԵ. — Հայերէն Աբխազաբար մաս. պատմ.

14 ՇՐ. — Իմաստասիրութիւն.

18 ԴԵ. — Բուսական կենսաբանութիւն. — Անգղիերէն.

20 ՈՒՐ. — Տիեզերագրութիւն.

23 ԲԵ. — Բնագիտութիւն.

25 ԴԵ. — Բաղադրութիւն. պատմ. — Բնալուծ.

27 ՈՒՐ. — Իրաւագիտութիւն.

Ծանօթ. — 1. Հարցաքննութիւնները կը սկսին կէս օրէ յետոյ ժամ (ը. ե.) 1ին:

2. Իւրաքանչիւր քննութեան տեւողութիւնն է առ առաւելն 2 ժամ:

ԴԱՐԱՍԿԶԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Ի

Ինքնակոչ. — Թերթերու անձանաչ ստորագրութիւնները:

Ինքնանաչ. — Երբոր չըլլաս բեմին վերայ խաղք կըլլաս, կը հասկընաս, աղաս:

Լ

Լեզու. — Կիներուն առաջին գեղեցկութիւնը, կնորաներուն՝ օլթան, խուլումնիի չրախներուն՝ ցորեկուան ճաշը, խալվուզ կիններուն զրամագլուխը, գինովներուն աստիճանացոյցը:

Լուալ. — Գործողութիւն մը՝ որ շատ անգամ առանց ջուրի կը կատարուի:

Լալ. — Տղայոց քով՝ կամակորութիւն, կանանց քով՝ սովորութիւն, իսկ վշտացելոց՝ Տէրոջ միտքարութիւն:

Լիլա. — Ամենուդ ծանօթ Վահան Փափազեանին գոյնը:

Լողալ. — Բան մը՝ որ եթէ չես գիտեր երբեք մի մտներ ջուրի, մեղքի ու պարտքի մէջ:

Խ

խօսք. — Բան մը՝ որ շատ անգամ դժբախտեղ կը վճարուի:

խելք. — Իրենին չը հաւնող մը չկայ:

խնամի. — Տրնքերմըն տրնքերմըն ազգականութիւն:

խմոր. — Բան մը որ ամէն մարդ ալ տարբեր տարբեր կերպով ունի, զոր օրինակ՝ Ենովք Արմէն ունի՝ զրականութեան խմորը, Մ⁰ Մանաս ձայնամարգագիտաբանական խմորը, Մէհաբեհան՝ Եկմալեանին խմորը, Չուլաեան՝ Նեհալեանին խմորը, Եր. Գօլանճեան՝ Վ. Հիւկօյի խմորը, ծառանիդ՝ տիրացուական խմորը, իսկ մեր հացագործը՝ հացին խմորը, քանի որ մեր չիթիլին ալ խմորը եկած ու թթուիլ սկսած է:

խաբուց. — Ածական մը՝ որ թէ պառաւ կիներու և թէ պատուաւոր ու պարկեշտ երիտասարդուհիներու կը տրուի:

խօսեցեալ. — Այս բառին տեղ առաջ նշանեալ կը գործածուէր, իսկ հիմա նկատելով որ նշանուիլ ուզող մը մինչեւ որ ամիսներով ու տարիներով աղջկան տունը չը մտնէ չելլէ, չուտէ չը խմէ, միասին չը պտրտի ու չը գիշերէ, այնպէս որ մինչեւ ամէն տուն ու ամէն տեղ իր վրայօք լաւ մը չի խօսուի չի նշանուիր, հետեւաբար որոշուեցաւ այս բառը գործածել:

խաղք. — Այն ատեն կըլլաս՝ երբ ուժէդ, չափէդ, աստիճանէդ, խելքէդ, կարողութենէդ, հասակէդ վեր գործի ձեռնարկես, զոր օրինակ. երբ երեկունան տիրացուն՝ այսօր նուազահանդէսի բեմին վրայ կեցնէ, երբ ամէն խալաւ ձայնով մարդ ինքզինք թէնօք կը յորջորջէ, երբ 30 դրչ եօթնեկալարձքով միւսիւ մը 300 ոսկի դրամօժիտ կուզէ, երբ վրան գտնուած 10 գրպանը 10 փարայ չուսեցող մը եկեղեցական ու կրթական գործերու ձեռնամուխ կըլլայ, երբ տիրացու Մաքսիմանսը եռաձայնի խումբ կը կազմէ, և տակաւին ծառանիդ իր հին գլուխը չի նորոգեր, և երբ ինքզինքդ հանրածանօթ ու ամէնէն սիրուած անձնաւորութիւն մը կարծելով ձրի թատրոն մտնել կուզես ու խաբուցիին կողմանէ դուրս կարտաքսուիս մօրթրականանշակապուտակարմրադոյն դիմօք:

Ձմաւ ամեց
ՌՈՄԱՆՈՍ

Սիրելի Վահան ԷՖ.

Ձերմապես կը խնդրեմ Ձեզմէ որպէս զի հանիք հրատարակել քե,

1. — Ես ո՛րեւ ազգականական կամ մտերմական կապ չունիմ Տիար Ահարոն Մարլէ, եանի հետ:

2. — Թե՛ Պաւ. Խմբագրութեան «Հանրագիտակ»ի հրաւերին վրայ՝ անցեալ թիւով երեւցած, «Արուեստագէտի գրօսանք» վիպակը, չարամտութեան կամ անելութեան բոլորովին զուրկ՝ երբեք չէ ուզած, մասնաւոր մէկը ակնարկել ուզելով՝ տաղանդներ նսեմացնել կամ (ուրիշ versionի մը պատասխանելով) անոնց ապագայ նիւթական յաջողութիւններու արգելք ըլլալ:

Դիւրագգած բարեկամներ կրնան վստահ ըլլալ անկեղծ եւ բարեացական ոգիիս վրայ:

Ձերդ յարգանքով
ԱՐՇԱԿ Թ. ՄՍՐԷԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Օրուան է՛ն կարեւոր լուրն է եռաձայնի արգելքը Կրօնական ժողովին կողմանէ, և եռաձայններու յաբատեւութիւնը դայն չեղեալ նկատելու համար: Չենք գիտեր թէ բոժոժը որի՛ն պիտի վիճակի: Կրօնական ժողովին որոշումէն չորս օր վերջ Ղալաթիայի եռաձայնն պանծաց, աս ինչ է:

ՆՈՅՆ. — Լրագրութեան համար Յունիս Յուլիս և Օգոստոս սէզօն մօրթ կը համարուի, ուստի խմբագրութիւնս որոշած է մէն մի շաբթուան մէջ պաղ պուղ յօդուած մը թըխել, որպէս զի ընթերցողները սէրին սէրին կարդան: Ուստի երբ այդ տեսակ գրութեան մը հանդիպիք և մտիլ զգաք՝ յիշեցէք մեր այս կարգադրութիւնը, ամէն:

ՍԿԻՒՏԱՐ. — Հոս, ո՛չ փոշիին և ո՛չ ալ ճամբաներուն վրայ կը խօսուի, այլ միմիայն Աղքատախնամին հաշիւներն են խօսքին է՛ն քէօբիւքիւ նիւթերը:

ՆՈՅՆ. — Վիճակի հինգշաբթին ուշ առան մութը կոխելէն վերջ, Մառքօի պարտէզին վերօքէն աղ գուլանըլմըլ ժառըքիեռ մը գտնուած է 60 սանթիմ տրամագիծով, եթէ մինչեւ այս կիրակի տիրուհին մէջտեղ չելլայ... (Պղտիկցնելով ես պիտի գործածեմ. Ծ. Լ.):

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Մօտայի ճամբան չինուեցաւ, այնպէս որ Ֆլիոքեօններ առանց ոտքերնուն ծայրը նայելու միշտ գլուխին վեր պիտի կրնան անոր ասոր աչքին մէջը նայելով գործ եփել: (Կէօզիւկիւներուն համար մեծ փոփոխութիւն մը չէ կարծեմ. Ծ. Լ.):

ՆՈՅՆ. — Տեղացի օրիորդ մը նկատելով որ գծաւոր կերպանները այս տարուան նորոյթներն են, եղբօրը ռեյեկ բանթալօնը գրգրեմ, պուղ է չինէր: (Մենք այս էքօնօմիք լուրը Ակիւտարէն կսպասէինք աւելի. Ծ. Խ.):

ԵԷՆԻ-ԳԱԲՈՒ. — Մառուլին պօստաններու փօքիւնէն անմիջապէս վերջ, վարուգ-

ներու պօսթանները սկսան դէպի իրենց քաշել փափկաճաշակներու հոծ բաղմութիւն մը: Ամէն իրիկուն հոս պարտէզները լեցուն են: (Լաւ ծամեցէք, կաւրուիք. Ծ. Խ.):

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ (Ռեսը). — Աղջիկս ողճսամ, ա՛յս է յանկերգը *** գիւղցի և շագանակի որդի պէս պըճըլ պըճըլ եկող աղջիկան տէր հօր մը, որ փեսացու ընտրել կուզէ մէկը՝ որ ո՛չ ոսկերիչ ըլլայ՝ ո՛չ կօշկակար, ո՛չ տիրացու, ո՛չ փաստաբան, ո՛չ բժիշկ, ո՛չ փաճառական, այլ պարզ գրագիր մը: (Նէ անոր տուր նէ ասոր, օ իշի կէլ պանա սօր. Ծ. Լ.):

ԳԱՍԸՄ-ՓԱՇԱ. — Ատենէ մը ի վեր Բերացի վարժապետ մը հոս տատանմիշ եղած է այցելութեան պատրուակաւ: (Բօստան կըտրէ միւսիւ, հաւան սէրթ կուգայ... Ծ. Խ.):

ՎԵՐԵՐԵԻՈՒՄ

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ օրաքերքը որ ժամանակէ մը ի վեր դադրած էր հրատարակուելի, այս օրուրնէ կսկսի հրատարակուիլ նոր ոյժերով եւ ծանօթ գրիչներէ բաղկացած խմբագրական մարմինէ մը, որոյ պէսն է սիրուած եւ փորձ գրագէտ-հրապարագիր՝ Ազն. Տիգրան Էճ. Արփիար:

Յաջողութիւն եւ յաւատարմութիւն կը մաղթենք մեր ազնիւ պատճառակցին եւ իր ընկերներուն:

Արտօնսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ.

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ՀԱՆՈՅՐԱՅԵՐԻ

Արսնց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թոփագեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսներով եւ գինեւոր անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վատահոլութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց չիք եւ գիմացկուն ֆաթիւն-
ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—35



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵԾԷ՛Ր

ՓՈՒԹԱՅԷ՛Ր ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Ե. ԻՍՏԱՆԻԼԵԱՆԷ

Ճեպը պէյ խանին
տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սիդսնէ,
Ջիսասանէ, Հնդկասանէ, Ճապէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն զգուարահաններն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովը ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՍՈՒԱՍ

Կ. Պոլսոյ համար արեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասանման	»	»	6 ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՛

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասկսի Ասասուրեան տպարանի քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր ըլլալ տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Իրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտաբութիւնը եւ կամ բաւթայի փութով 20 հաւ-
20 դրուի հաշուով:

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՀԵՐԵԹԻԿ ՊՕՅԱՃԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հասէսի քիւ 50

Սոյն առաջնակարգ կազմատունը՝ որ մօտ երեսուն տարուան հաստատութիւն մըն է, իր գեղեցիկ գործերովը, մաքրութեամբը և արագութեամբը արդէն մեծ համբաւ չահած և գրաւած է վըստահութիւնը ամէն անոնց՝ որոնք փորձով հաստատած են այս առաւելութիւնները:

Հերթիկ էֆ. Պօյաճեան այս անգամ Եւրոպայէն շրջել տուած ըլլալով արհեստին կատարելագործեալ կարգ մը մեքենաներ, այսօր ի վիճակի է մրցիլ մայրաքաղաքիս բոլոր կազմարարներու արտադրած գործերուն հետ:

Անգամ մը փորձելը բաւական է:

ԳԱՌՆԻԿ ՔԷՇԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօ խան իրւ 2

Նախ փորձառուները, յետոյ խառուողները միայն գիտեն էթ ո'րչափ դժուար է, գտնել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան:

Գառնիկ Քէշիշեան վաճառատունը թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ ֆաքեյաներ, գուլպաներ, քաւիկնակներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ, ֆիլթիֆու և խիոտ ճաշակաւոր ներգնաւապիկներ, գլխու շաւրեր, քաւ ֆոսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձնարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն դիմելով պիտի հաստատեն թէ՛ գիներու աժանութեան, ճեսակի ազնուութեան և ապրանքի տոկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո' և է տեղ կարելի է գտնել: